

### ԱՆՆԱՐԴԱՆ ՇԱԲԱՏԵՐԿ ՈՒ ՍԻՐՏՈՎ ԱՂՕԹԷ

Եթէ անխարդախ հաւատքով ու սրտովին աղօթես Աստուծոյ, մեղքերուդ համար թողութիւն եւ օրինազանցութիւններուդ համար քաւութիւն կը ստանաս եւ կը ժառագես երկինքի արքայութիւնը եւ իր անասիման բարութիւնը, կը ստանաս մարմնի առողջութիւն եւ հոգիի փրկութիւն, կ'ունենաս ուրախ օրեր, խաղաղ կեանք, հեռու բոլոր զրպարտողներէ: Աղօթքը բռնակալներու բարկութեան ալիքները կը զսպէ, Աստուծոյ բարկութիւնը կը մեղմացնէ, աղքատները կը հարստացնէ, տկարները կը զօրացնէ, հիւանդները կը բուժէ, կատաղի մոլութիւնները ետ կը մղէ, ամուլը ծնելու ատակ կը դարձնէ, անգաւակը բազմածին կ'ընէ, ծովուն ալիքներէն եւ գետի յորձանքներէն կը փրկէ, անօթիները կը կերակրէ, մերկերը կը զգեստաւորէ, կանխահաս մահերը կ'արգիլէ ու բոլորին փափաքները կը կատարէ՝ եթէ երբեք հաւատքով աղօթես:

Իւրաքանչիւր աղօթք պատարագ մըն է Աստուծոյ ուղղուած եւ եթէ ընկերոջդ հետ սիրով չես, քու աղօթքդ ընդունելի պատարագ մը չէ, որովհետեւ Աստուծոյ չի բարձրանար: Արդարեւ ան, որ իր ընկերոջ դէմ ոխ ունի, անհնար է որ իր աղօթքը առ Աստուած բարձրանայ, իսկ եթէ մէկը սիրազեղ սրտով աղօթէ, այնպիսին տակաւին իր ձայնը չբարձրացուցած Տէրը պիտի ըսէ. - «Ահա ես եմ» (Ես. 58.9):

### ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Բայց ի՞նչ է խնկարկութեան նպատակը, ի՞նչ է խունկին իմաստը մեր եկեղեցւոյ նուիրական յարկէն ներս:

Առաջին հերթին՝ խունկ աւետարանական շունչով եւ օրինակով նուիրագործուած է: Յիշենք, որ Քրիստոսի Ա. ծննդեան, երբ մոգերէն մին կընդրուկ նուիրեց ծնեալ Փրկչին, որ է անուշահոտ խունկը: Եւ դեռ, Յովսէփ Արիմաթացին եւ Նիկողեմնոս, երբ Պիղատոսէն արտօնութիւն առին Յիսուսի մարմինը թաղելու համար, գայն գըրոսել ետ խունկով փաթեցին եւ այդպէս թաղեցին: Չմոռնանք, որ իւղաբեր կանայք Կիրակի առաւօտեան, երբ գերեզման գացին իրենց հետ խունկ տարին, անոր բուրմոնքով օծելու համար իրենց սիրեցեալ Վարդապետին գերեզմանը:

Երկրորդ՝ խորհրդաւոր պահու մը ստեղծումն է, երբ հաւատացեալը կը զգայ, թէ ինչպէս իր աղօթքն ու հառաչանքը խունկի ծուխին հետ ընդհանրելով ոլորապտոյտ կը բարձրանան դէպի երկինք՝ առ Աստուած:

Եւ երրորդ՝ Քրիստոսի ներկայութիւնը խորհրդանշող արտայատութիւն է, ինչպէս պիտի երգէր սրբագան շարձականագիրը եւ հոտ անուշ բուրեաց յաշխարհ... , ուր համախումբ հաւատացեալներու ներկայութիւնը եկեղեցւոյ կը վերածուի:

### ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱՏԱԹԵՐԻԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ՆՈՅՏԵՄԵՐ 2021

ԹԻԻ 45

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱՎԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 24.1-13: Եփ. 5.15-33:

ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 8.49-57

### ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 8.49-57

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ռեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները, բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ՝ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին՝ որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի ե՛լ»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց՝ որ ուտելիք տան աղջկան:

### ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻՍԵՆ ՀԱԻԱՏԱ՛

Քրիստոսի այս փառաբանական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական ֆրիստոնեայ անհատին, որ իր ֆրիստոնեական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ խօսքով: Սաղմոսերգուն փորձառաքար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, ես որմէ՞ պիտի վախճամ: Տէ՛րն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ»: (Սղմ. 26.1): Հետեւաբար սիրելի ընթերցող, դժուարութեան մէջ ես: Մի՛ մտածեր, դիմէ՛ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ, եւ քեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ԱՅԼ ՄԻՍԵՆ ՈՒ ՄԻՍԵՆ ՀԱԻԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻԻՆԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐԸ

Հրեշտակապետեր՝ Գարրիելի եւ Միքայելի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին կը գուգադիպի Շաբաթ՝ 8 Նոյեմբերին: Եկե՛ք միասնաբար ծանօթանանք մախ հրեշտակ բառի իմաստին եւ ապա հրեշտակապետերու:

Հրեշտակ բառը կը թարգմանուի պատգամաւոր կամ դեսպան: Հրեշտակները սահմանուած են սպասաւորելու հոգիներու փրկութեան այն մարդոց՝ որոնք պիտի ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Թէեւ Աստուծոյ առջեւ ծառայակից ենք հրեշտակներուն հետ, սակայն մեծ է տարբերութիւնը մարդոց եւ անոնց միջեւ:

Ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի վաստակաւորներնոյնպէս եւ հրեշտակներու դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք ծանօթ են մեզի իրենց անունով եւ կը տօնախմբենք իրենց յիշատակը:

**ԳԱՐԻԷԼ** հրեշտակը, որ կը թարգմանուի այր Աստուծոյ, երկինքի բոլոր գուարթուններէն աւելի ծանօթ է մարդկային ցեղին: Ան յանախ պատգամաւորութեամբ հանդէս կու գայ հին, թէ նոր կտակարաններուն մէջ, որպէս գործակալ կամ դեսպան երկնաւոր փեսային:

**ՄԻՔԱՅԷԼ** հրեշտակը, ներկայացուած է որպէս երկնային զօրավար եւ միանգամայն, վերակացու ու պաշտպան Աստուծոյ եկեղեցիին:

Երբ Մեծն Կոստանդիանոս իր դարձնելու բազմաթիւ եկեղեցիներ շինել տուաւ, ասոնց շարքին հռչակաւոր եղաւ Ս. Միքայել հրեշտակապետի տաճարը: Ըստ աւանդութեան, բարեպաշտ կայսրը Սոսթենիոնի մէջ գտաւ արձան մը, որ կը ներկայացներ արծիւի թեւերով այր մը: Երբ կայսրը հարցուց, թէ որո՞ւ արձանն էր ան, Միքայել հրեշտակապետը անոր երեւցաւ եւ ըսաւ, որ հոն տաճար մը կանգնէ, որպէսզի հաւատացեալներուն համար ուխտատեղի մը ըլլայ եւ այդտեղ երկնային բարեխօսութիւն գտնեն իրենց հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն համար:

Յայսմաւորքները կը գրեն, թէ երբ առաջին անգամ պատարագ պիտի մատուցուէր Ս. Միքայելի անունով կառուցուած եկեղեցիին մէջ, ի ծնէ խուլ եւ համր պատանի մը կանխեց սարկաւազը եւ բարձրաձայն ըսաւ. «Պոսխոմէ» որ կը նշանակէ գգոյշ եղե՛ք: Եւ ապա սուրբ հայրապետը ըսաւ. «Ի սրբութիւն սրբոց»:

Ներսէս Շնորհալի իր եղբօր՝ Գրիգորիս կաթողիկոսի խնդրանքով, 100 տուն ոտանաւոր գրեց՝ նուիրուած պանծալի հրեշտակներուն:

**ՈՍԿԵՂԵՆ ՀԱՍԱՐ**  
**Ձեզմէ թօթափեցէ՛ք ամէն աղտոտ սովորութիւն ու չար ցանկութիւն, եւ խոնարհութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ Խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել:**  
**(Յակոբոսի)**

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

### ԳՈՌՈՉ ՄԱՐԴՐ՝ ՂԵՒԷՆ ՏԱՐԲԵՐ ՉԷ

Երեք բան գոռոզութեան մասին. -  
1) Գոռոզութիւնը Արուսեակ քերպիւրէն Մատանայի վերածեց, ուստի, զգուշանանք գոռոզութենէն. ատիկա մեզ Մատանայի կը վերածէ: Արուսեակը գոռոզացաւ եւ դուրս դրուեցաւ երկինքէն: Ուստի, գոռոզ մարդը տեղ չունի երկինքի մէջ:

2) Գոռոզ մարդը դէռն ու չար ոգիէն տարբեր չէ, եւ ես կրնամ փաստել ատիկա: Եթէ գոռոզ մարդը հրեշտակ ստեղծուած ըլլար, ան անպայման Արուսեակ քերպիւրէին ապստամբութեան հետեւած պիտի ըլլար, եւ անիկա այսօր անկասկած պիտի դէտրուէ եւ չար ոգիներու շարքին պիտի ըլլար:

3) Արուսեակ քերպիւրէին գործաւ առաջին մեղքը՝ գոռոզութեան կամ հպարտութեան մեղքն էր (Ա.Տմ 3.6): Նախամարդուն ալ գործած առաջին մեղքը՝ հպարտութիւնն էր: Արուսեակին միջոցաւ գոռոզութիւնը մուտք գործեց հրեշտակներու բանակին մէջ մասին մէջ: Իսկ Եւային ու Ադամին միջոցաւ՝ անիկա մուտք գործեց համայն մարդկութեան սերունդէն ներս:

### ՄԵՐ ՍՈՐԿԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Հեռու մնալ գոռոզութենէ, որովհետեւ ատիկա մեզ պիտի դէտրուէ շարքին կը դասէ:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

### ԵՐԲ ԾՆՆՐ ՀԻՆՏԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՆՈՒՄՆ ՎՏԱՆԳԻՆ ՄԷՋ ԵՍ,

#### կարդա՛ ՍԱԳՄՈՍ 41

Երանի՛ անոր, որ թշուարին հոգ կը տանի: Նեղութեան ժամանակ Տէրը գայն պիտի ազատէ: Տէրը պիտի պահպանէ գայն, անոր կեանքը պիտի երկարէ, գայն երանելի պիտի դարձնէ այս աշխարհի մէջ, եւ գայն պիտի չճգէ թըշնամիներու քնահանոյթին: Տէրը պիտի օգնէ անոր, հիւանդ պառկած ժամանակ, եւ իր հիւանդութենէն զինք պիտի ապափնէ: Ես Տիրոջ ըսի. - «Ողորմէ՛ ինձի, Տէր. բժշկէ՛ զիս, ես քեզի դեմ մեղանչեցի»: Թշնամիներս չարակամութեամբ կ'ըսեն. - «Ե՞րբ պիտի մեռնի, եւ անունն իսկ չյիշուի»: Ով որ ինձի տեսութեան կու գայ՝ կեղծ-կեղծ խօսքեր կը խօսի, բամբասանքի նիւթ կը ժողովէ, դուրս ելլելով՝ կը տարածէ: Բոլոր անոնք որ զիս կ'ատեն՝ կը հաւաքուին, եւ չար վախճանս կ'երեւակայեն, փսփսալով իրարու. - «Չարագուշակ հիւանդութեան բռնուած է, անկողինին գամուած է, եւ ա՛յ բնաւ ոտքի չ'ելլեր»: Նոյնիսկ ամենէն մտերիմ ընկերս, որուն կը վստահէի, եւ որ ինձի սեղանակից կ'ըլլար միշտ, ա՛ն ալ ինձի դաւանանց: Բայց դուն, ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, ոտքի՛ հանէ զիս, որ ես անոնց փոխարէնը հատուցանեմ: Թշնամիներս թող չկարենան յաղթանակ տանիլ իմ վրաս, եւ ատով գիտնամ՝ թէ կը հաւնիս զիս: Բայց դուն արդէն զիս կ'ընդունիս՝ անմեղութեանս համար, եւ յաւիտեան զիս կը պահես քու ներկայութեանդ մէջ:

Օրհնեալ՛ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան Ամէն: